



«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

11.12.2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պարոն **Արթուր Նալբանդյանին**

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80

Հարգելի պարոն *Նալբանդյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում գյուղատնտեսական վարկերի վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Մարզում 2016-2017թթ. քանի՞ գյուղացիական տնտեսություն է օգտվել գյուղատնտեսական վարկերից, ինչ գումարի չափով և պայմաններով: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տարիների:
2. Ո՞ր բանկերը կամ վարկային կազմակերպություններն են մարզի բնակիչներին տրամադրում գյուղատնտեսական վարկեր և ի՞նչ պայմաններով:
3. 2016-2017թթ. մարզի ո՞ր համայնքներից են օգտվել պետության կողմից արտոնյալ պայմաններով տրամադրված գյուղատնտեսական վարկերից և ինչ պայմաններով: Տեղեկատվությունը տրամադրել առանձին-առանձին՝ ըստ տարիների, համայնքների, յուրաքանչյուր համայնքի վարկառու բնակչության թվի:
4. 2016-2017թթ. ինչպիսի՞ն է եղել վարկառու գյուղացիների վճարունակության վիճակը՝ նախորդ տարիների հետ համեմատ:
5. 2016-2017թթ. քանի վարկառու գյուղացի է կորցրել գույքը՝ վարկը մարել չկարողանալու պատճառով:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ **Գրիշա Բալասանյան**